ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի նոյեմբերի 22-ից նոյեմբերի 25-ը Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանի Ուզբեկստանի Հանրապետություն (քաղաք Սամարխանդ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Հովհաննես Մարտիրոսյան

2. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Սամարղանդ (Ուզբեկստանի Հանրապետություն)
   2025թ. նոյեմբերի 22-ից նոյեմբերի 25-ը

3. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   Ուզբեկստանի Հանրապետության էկոլոգիայի, շրջակա միջավայրի պահպանության և կլիմայի փոփոխության նախարարություն
   ՍԻԹԵՍ կոնվենցիայի քարտուղարություն

4. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցություն «Անհետացման եզրին գտնվող վայրի բուսական և կենդանական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվեցիայի (ՍԻԹԵՍ) կողմերի 20-րդ համաժողովի (COP 20) բարձրաստիճան հատվածի հանդիպումներին

5. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   «Անհետացման եզրին գտնվող վայրի բուսական և կենդանական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի կողմերի 20-րդ համաժողովի բարձրաստիճան հատվածի հանդիպումների ընթացքում հիմնականում քննարկվել են.

- վտանգված տեսակների միջազգային առևտրի վերահսկողության գլոբալ միտումները, դրանց պահպանության ուղղությամբ երկրների պարտավորությունների կատարելագործումը և իրավակիրարկման գործողությունների ուժեղացման անհրաժեշտությունը,
- ՍԻԹԵՍ-ի ռազմավարական տեսլականը, որը, ի թիվս այլ հարցերի, համադրում է Կոնվենցիայի առաջնահերթությունները կենսաբազմազանության համաշխարհային պարտավորությունների նպատակների և խնդիրների հետ,

- Կոնվենցիայի լեզվային ռազմավարությունը, ներառյալ՝ տեղեկատվության բազմալեզու մատչելիությունն ապահովելու և իրականացման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները,
- Կոնվենցիայի կարողությունների զարգացման շրջանակային ծրագիրը,
- Պահանջարկի նվազեցման ռազմավարությունների արդիականությունը, որոնք նպատակ ունեն փոխել սպառողների ընտրությունը՝ խթանելով հրաժարումը անօրինական վայրի բնության արտադրանքներից:

6. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>

Համաժողովի շրջանակում կայացել են հետևյալ երկկողմ հանդիպումները.

- Վայրի բնության դեմ հանցագործությունների պայքարի միջազգային կոնսորցիումի (International Consortium on Combating Wildlife Crime (ICCWC) համակարգող Էդվարդ Վան Աշի հետ հանդիպում: Քննարկվել է Հայաստանի և ICCWC-ի հետագա համագործակցության ձևավորման, ինչպես նաև Հայաստանի՝ կոնսորցիումին միանալու գործընթացի մեկնարկման հարցը: Դրա վերաբերյալ ձեռք բերվեց պայմանավորվածություն, համաձայն որի՝ հայկական կողմը ՍԻԹԵՍ կոնվենցիայի կառավարող մարմնի՝ շրջակա միջավայրի նախարարության միջոցով կուղարկի պաշտոնական գրություն ICCWC-ին միանալու համար: Այս քայլից հետո կմեկնարկի Հայաստանի անդամակցության գործընթացը: Համաձայնեցված է, որ այդ գործընթացը կհամակարգի Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը՝ որպես Հայաստանի Հանրապետության առաջատար հաստատություն վայրի բնության պահպանության իրավակիրարկման ոլորտում: ICCWC-ն աջակցում է երկրների իրավապահ և վերահսկող մարմիններին՝ զարգացնելու իրավական, տեխնիկական և կառավարչական կարողությունները վայրի բնության հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի համար:

- Հաջորդ հանդիպումը կայացավ Ղազախստանի Հանրապետության էկոլոգիայի և բնական պաշարների նախարարության անտառների և վայրի բնության կոմիտեի ղեկավար Դանիյար Տուրգամբայեվի հետ: Քննարկվել են համագործակցության ընդլայնման հնարավորությունները վայրի բնության պահպանության, անտառների կայուն կառավարման և վերահսկողության թվայնացման ուղղություններով: Ղազախական կողմը պատրաստակամություն հայտնեց աջակցել Հայաստանին վերահսկողական համակարգերի թվայնացման և արդիականացման գործընթացում՝ ներկայացնելով իրենց առաջատար փորձը:

- Ուզբեկստանի Հանրապետության էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության նախարարության անտառային գործակալության դեղաբույսերի մշակման և վերամշակման գիտաարտադրական կենտրոնի ղեկավար Բախրոմ Իզբասարովի հետ տեղի ունեցած հանդիպման արդյունքում ստորագրվեց

փոխըմբռնման հուշագիր: Փաստաթուղթը նախատեսում է ընդլայնել համագործակցությունը կենսաբազմազանության պահպանության ոլորտում, իրականացնել գիտական հետազոտություններ, տեխնոլոգիական փոխանակում և կարողությունների զարգացման համատեղ ծրագրեր: Այն նաև նախատեսում է ստեղծել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան կազմակերպել փորձագիտական համագործակցություն կենսառեսուրսների կայուն կառավարման, բնական պաշարների պահպանման և վերահսկողության ոլորտներում:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- ICCWC-ի հետ համագործակցության մեկնարկ,
- Ղազախստանի էկոլոգիայի և բնական պաշարների նախարարության անտառների և վայրի բնության կոմիտեի հետ ձեռքբերված պայմանավորվածություններ,
- Ուզբեկստանի էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության նախարարության անտառային գործակալության դեղաբույսերի մշակման և վերամշակման գիտաարտադրական կենտրոնի հետ փոխըմբռնման հուշագրի ստորագրում:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպումների ավարտին ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հետագայում խորացնելու համագործակցությունը և իրականացնելու համատեղ նախաձեռնություններ, որոնք կունենան նպաստող դեր երկրների միջև բնապահպանական գործընկերության ամրապնդման գործում:

Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի ղեկավար

27.11.2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN HOVHANNES 3212790148

Հովհաննես Մարտիրոսյան
27.11.2025թ.